# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք,
Գ.ՖԻՈԼԵՏՈՎՈ, Հեռ. (0322)68941 ,
fioletovo.lori@mta.gov.am

N 17
*29 հունվար 2018թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

Ձեզ ենք ուղարկում Ֆիոլետովո համայնքի ղեկավարի թիվ 01, 02, 03, 04, 05 որոշումները

առդիր 05 ֆայլ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱԼԵՔՍԵՅ ՆՈՎԻԿՈՎ**

*Կատ. '*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Ֆիոլետովո, (0322)68941, fioletovo.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՀՈՒՆՎԱՐԻ 2018թվականի N 01

## 06-113-031-021 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Ս Պողոսյանի դիմումը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 18.04.1991թ. թիվ 3 որոշումը, և սեփականաշնորհման վկայկան N 1748800:

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով ինքնակամ կառուցված շենքերի ,շինությունների ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետով , ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման հավելվածի 48-րդ կետով

**որոշում եմ՝**

Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 006-113-31-021 ծածկագրի տակ գտնվող 0,087քմ տնամերձ հողամասի կառուցման և սպասարկման հողամասի և տնատիրությունում գտնվող այլ անձանց իրավունքներ և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սեվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող շինության նկատմամբ՝

Սաշիկ Սամսոնի Պողոսյանի
Էլմիրա Շուրայի Պողոսյանի
Օքսաննա Սաշիկի Պողոսյանի
Ռուզաննա Սաշիկի Պողոսյանի
Արկադի Սաշիկի Պողոսյանի իրավունքը:

Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց և իրավուևքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ.

Հողամասի սահմանները որոշվում են որակավորման վկայական ստացած անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

Անշարժ գույքի փոստայի հասցեն ՝1-ին փողոց, թիվ 383/1 տնամերձ հողամաս:

Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարության և առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռիի տարածքային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԵՔՍԵՅ ՆՈՎԻԿՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հունվարի 2018 թվականի N 02

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Աղետների ռիսկերի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով ,Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասինե ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի դ) կետով, ,Տեղական ինքնակառավարման մասինե ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքում հաստատել.

1) Աղետների ռիսկի կառավարման (այսուհետ՝ ԱՌԿ) խորհրդի կազմը ՝ համաձայն հավելված N 1-ի.

2) ԱՌԿ խորհրդի աշխատակարգը ՝ համաձայն հավելված N 2-ի.

2. Խորհրդի անդամներին՝

1) մինչև սույն թվականի մայիսի 15-ը մշակել Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքի աղետների ռիսկի կառավարման պլանը.

2) յուրաքանչյուր տարվա փետրվարի 15-ը իրականացնել համայնքի ԱՌԿ պլանի ճշգրտում:

3. ԱՌԿ խորհրդի ղեկավարի տեղակալին՝ սույն որոշման 1-ին կետով ստեղծված ԱՌԿ խորհրդի ներգրավված յուրաքանչյուր անձի կամ անձանց փոփոխության դեպքում 5-օրյա ժամկետում ներկայացնել սույն որոշման փոփոխման վերաբերյալ որոշման նախագիծ:

4. Որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՆՈՎԻԿՈՎ

Հավելված N 1
Ֆիոլետովո համայնքի ղեկավարի
18 հունվարի 2018թ-ի N 02 որոշման

# ԿԱԶՄ

# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

**Համայնքի ԱՌԿ խորհրդի կազմը՝**

1. խորհրդի ղեկավար՝ Նովիկով Ալեքսեյ /համայնքի ղեկավար/,
2. խորհրդի ղեկավարի տեղակալ-տարհանման և պատսպարման պատասխանատու՝ Պոպովա Դինա /համայնքի ղեկավարի տեղակալ/,
3. խորհրդի քարտուղար՝ Սուկովիցինա Եվդոկիա,

4. խորհրդի անդամներ՝
   1) ավագանի Զադորկին Վալերի,
   2) ավագանի Նազարով Վալերի,
   3) ավագանի Դեսյատով Ալեքսեյ,
   4) ոլորտային պատասխանատուներ՝

ա. հրշեջ-փրկարարական աշխատանքների պատասխանատու՝ Արարատ Աբրահամյան,
բ. հասարակական կարգի պահպանման պատասխանատու՝ Զադորկին Ալեքսանդր,
գ. տրանսպորտային ապահովման պատասխանատու՝ Նովիկով Պյոտր,
դ. կապի և տեղեկատվական փոխանակման պատասխանատու՝ Մարգարյան Նազելի,
ե.բժշկական օգնության կազմակերպման պատասխանատու՝ Վարդանյան Համիկ,
զ. կենսաապահովման կազմակերպման պատասխանատու՝ Բաղդյան Արտակ,
է. կոմունալ-էներգետիկ ապահովման պատասխանատու՝ Սամոդուրով Պավել,
ը.ինժեներական միջոցառումների ապահովման պատասխանատու՝ Մորոզով Անդրեյ,
թ. դիակների ճանաչման և հուղարկավորման կազմակերպման և հաշվառման պատասխանատու՝ Արինին Պյոտր,
ժ. անհայտ կորածների և ընտանիքի անդամների միավորման, կորած/միայնակ մնացած երեխաների ու ծերերի հարցերով զբաղվող պատասխանատու՝ Մինաասուև Պավել:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Ֆիոլետովո, (0322)68941, fioletovo.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 03

### ՖԻՈԼԵՏՈՎՈՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածով և ՀՀ փոխվարչապետ, տարածքայինկառավարմաննախարարի 2009 թվականի հունվարի19-ի N 03-Նհրամանիհավելվածի 20-րդկետով՝

Որոշում եմ.

1. Հաստատել Ֆիոլետովոյի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2017 թվականի ամենամյա արձակուրդների տրամադրման հերթականությունը (նախնական գրաֆիկը).

| Աշխատակազմի աշխատակցի անուն, ազգանունը | Հաստիքի անվանումը | 2017 թվականի ամիսը |
|---|---|---|
| Նովիկով Ալեքսեյ | Համայնքի ղեկավար | Օգոստոս |
| Պոպովա Դինա | Տեղակալ | Փետրվար |
| Աբրահամյան Արարատ | քարտուղար | Մարտ |

2. Սույն հրամանի մասին տեղեկացնել աշխատակազմի վերոնշյալ աշխատակիցներին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԵՔՍԵՅ ՆՈՎԻԿՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք
ՀՀ Լոռու մարզ գ. Ֆիոլետովո (0322)68941 fioletovo.lori@gov.am

ՈՐՈՇՈՒՄ N 4

26 հունվարի 2018թ.

# 06-113-0021-0123 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՉԻՉՅՈՎԻ, ԴԻՆԱ ՉԻՉՅՈՎԱՅԻ ԵՎ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՉԻՉՅՈՎԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Ա.Չիչյովի դիմումը, գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթի կասեցման 22.01.2018թ որոշումը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 16.04.1991թ. թիվ 3 որոշումից քաղվածքը, համայնքի ղեկավարի 28.12.2017թ թիվ 47 որոշումը, Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 01.06.2010թ թիվ 186-Ն հրամանով, Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7 հոդվածով՝ Հաշվի առնելով, որ Ֆիոլետովո համայնքի 06-113-0021-0123 կադաստրային ծածկագրում գտնվող անշարժ գույքի քարտեզագրման և հաշվառման ժամանակ տեղի է ունեցել սխալ, մասնավորապես այն թյուրիմացաբար հաշվառվել է Միխայիլ Արինինի ընտանիքի անվամբ և 21.12.2000թ տրամադրված թիվ 2 տնտեսական գրքի թիվ 162 էջի քաղվածքը նույնպես չի վերաբերում 0021-0123 ծածկագրով տնատիրությանը:

Հողամասի հատկացման օրվանից որպես սեփականություն այն օգտագործվում և տիրապետվում է Ալեքսանդր Ալեքսեևիչ Չիչյովի ընտանիքի կողմից, հողամասում գտնվող անշարժ գույքը ևս կառուցվել է իրենց կողմից, որոնց վերաբերյալ չի պահպանվել իրավունք հաստատող փաստաթղթեր, իրենց կողմից է նաև վճարվում գույքահարկը և հողի հարկերը, այն երբևէ չի պատկանել Միխայիլ Արինինի ընտանիքին:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 28.12.2017թ թիվ 47 որոշման համապատասխան ՀՀ Լոռու մարզ Ֆիոլետովո համայնքի 06-113-0021-0123 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.06591հա հողամասի և հողամասում գտնվող անշարժ գույքի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել և վերականգնել Ալեքսանդր Ալեքսեևիչ Չիչյովի, Ալեքսանդր Ալեքսանդրովիչ Չիչյովի և Դինա Միխայիլովնա Չիչյովայի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը:
2. Չեղյալ ճանաչել 06-113-0021-0123 ծածկագրով անշարժ գույքի վերաբերյալ քարտեզագրման և հաշվառման ժամանակ սխալ նշված տվյալները և սույն մասով 21.12.2000թ տրամադրված թիվ 2 տնտեսական գրքի թիվ 162 էջի քաղվածքը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ա.Ի.Նովիկով

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՖԻՈԼԵՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ֆիոլետովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Ֆիոլետովո, (0322)68941, fioletovo.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՀՈՒՆՎԱՐԻ 2018 թվականի N 05

### 06-113-006-024 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 02-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով ինքնակամ կառուցված շենքերի ,շինություններին ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետով , ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման հավելվածի 48-րդ կետով և սեփականաշնորհման վկայանանը՝ N1748286

**որոշում եմ՝**

1. 006-113-006-024 ծածկագրի տակ գտնվող բնակելի տանը և 0,205քմ տնամերձ հողամասի և տնատիրությունում գտնվող այլ անձանց իրավունքներ և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սեվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող շինության նկատմամբ իրավունքը:
2. Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց և իրավուււնքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ.
3. Հողամասի սահմանները որոշվում են որակավորման վկայական ստացած անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
4. Անշարժ գույքի փոստայի հասցեն `1-ին փողոց, թիվ 224 տնամերձ հողամաս:
5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարության ն առըներ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռիի տարածքային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԼԵՔՍԵՅ ՆՈՎԻԿՈՎ